ԿԱՐԾԻՔ

Կարեն Սամվելի Բայրամյանի «Աշխարհաբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Կարեն Բայրամյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսական աշխատանքը նվիրված է 20-րդ դարի նշանավոր արևելագետ, հայագետ, հնագետ, հնագրագետ, բանասեր, մշակույթի պատմաբան, ազգագրագետ Աշխարհաբեկ Քալանթարի կյանքին, հուշարձանապահպանական, նաև հնագիտական, գիտական, մանկավարժական գործունեությանը: Անհրաժեշտ նշել, որ աշխատանքը բավականին արդիական է, քանզի անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել հայ մտավորականության այն նվիրյալների գործունեությունը, որոնք 20-րդ դարի առաջին կեսին դժվարին պայմաններում իրենց նվիրեցին Հայաստանի և հայկական մշակույթի և գիտության կայացմանը, որոնցից մեկը Աշխարհաբեկ Քալանթարն էր: Թվում է, որ արդեն շատ բան է արվել, հրապարակվել են բազմաթիվ և բազմաբնույթ աշխատություններ և փաստաթղթերի ժողովածուներ: Առաջին հայացքից թվում է, թե այս խնդիրն արդեն իր լուծումն ինչ որ կերպ ստացել է, սակայն իրական դեռևս առկա են հայոց նորագույն շրջանի պատմության բազմաթիվ չուսումնասիրված էջեր, որոնք սպասում են իրենց լուսաբանմանը: Այս առումով կարևոր ենք համարում աշխատանքները այս ուղղությամբ:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է մաքուր հայերենով, ներկայացված է գիտական պատշաճ մակարդակով և ունի սկզբնաղբյուրների հարուստ ցանկ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

Ներածության մեջ, ինչպես ընդունված է, ատենախոսը ներկայացրել է աշխատանքի արդիականությունը, հիմնական նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը, աշխատանքի աղբյուրագիտական հենքը և մեթոդաբանությունը:

Առաջին գլուխը վերնագրված է «Աշխարհաբեկ Քալանթարը Հայաստանի հուշարձանների պահպանության ակունքներում», որի երկու ենթագլուխներում ատենախոսն անդրադառնում է Աշխարհաբեկ Քալանթարի հնագիտական և ազգագրական գործունեության առաջին քայլերին՝ որպես Նիկողայոս Մառի աշակերտ, մասնակցությունը Սումալուի գավառի ազգագրական և հնագիտական արշավախմբին և Անիի պեղումներին: Ներկայացվել է նաև նրա գործունեությունը 1918-1920թթ. Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես մասնակցությունը ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության հնությունների պահպանության բաժնի և Հայաստանի հնությունների պետական պահպանության կոմիտեի աշխատանքներին:

Երկրորդ գլուխը, որը կրում է «Աշխարհաբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը խորհրդային իշխանության առաջին տարիներին» վերնագիրը: Ատենախոսն այս գլխում ներկայացնում է Աշխարհաբեկ Քալանթարի ծավալած հուշարձանապահպան գործունեությունն Խորհրդայի Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գիտական քարտուղար, կարճ ժամանակ որպես նախագահ, ապա նորից գիտական քարտուղար: Ինչպես նշում է ատենախոսը, հուշարձանների պահպանության խնդիրը խորհրդային իշխանության տարիներին կարևորվել է և պատահական չէ, որի նոր իշխանությունները առաջին իսկ օրից ծավալեցին հուշարձանապահպան ակտիվ գործունեություն: Աշխարհաբեկ Քալանթարը, որպես այդ գործի լավագույն գիտակ, ընդգրկվում է այդ աշխատանքներում: Վերլուծել և գնահատել Աշխարհաբեկ Քալանթարի՝ որպես հնությունների պահպանության կոմիտեի գիտական քարտուղար գործունեությունը

1921-1924թթ., առկա խնդիրները և դժվարությունները: ՀՍԽՀ հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանը քանզի զբաղված էր ճարտարապետական գործունեությամբ, Աշխարհաբեկ Քալանթարն էր փաստացի գլխավորում Հայաստանում կատարվող հնագիտական-հուշարձանապահպան աշխատանքները: Աշխատության այս բաժնում ներկայացված է նաև Աշխարհաբեկ Քալանթարի ավանդը «Զվարթնոց» պատմահնագիտական վայրի կայացման գործում:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «Աշխարհաբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը 1925-1936թթ»: Այս գլխում ատենախոսը ներկայացնել և վերլուծել է Հայաստանում հնությունների պահպանության գործընթացը քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնումից հետո, երբ հնարավոր է լինում ֆինանսական միջոցներ ներդնել այդ գործընթացում: Հեղինակի բնութագրմամբ 1925թ. և հետագա տարիները կարելի է համարել Հայաստանի հնությունների պահպանության վերելքի ժամանակաշրջան՝ նկատի ունենալով թե՛ կատարվող աշխատանքների ծավալը և թե՛ տարածքային ընդգրկումը: Բնական է, որ այդաշխատանքների կազմակերպումը գլխավորում է Աշխարհաբեկ Քալանթարը: Գլխում ներկայացված են նրա ջանքերով կազմակերպված արշավախմբերի գործունեությունը Սևանի ավազանում, Աղցքի հնավայրի պահպանությանը ուղղված քայլերը, ջանքերը Դվինի հնավայրի պեղումները սկսելու գործում: Առանձին ենթագլուխ է նվիրված իշխանությունների հակակրոնական քաղաքականության պայմաններում կրոնական հուշաձանների պահպանության խնդրին, մասնավորապես Երևանի Կապույթ մզկիթին և Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցուն, վերջինի ավերման և առանձին մասունքների պահպանությանը: Ատենախոսությունը ավարտվում է Աշխարհաբեկ Քալանթարի ձերբակալման և աքսորի ճանապարհին մահվան մասին տեղեկությամբ:

Եզրակացության մեջ ատենախոսը ներկայացնում է աշխատանքի հիմնական դրույթները, դրանցից բխող եզրահանգումները, իսկ հավելվածում ներկայացված են

մի շարք փաստաթղթեի պատճեններ:

Կարեն Բայրամյանի ատենախոսությունը արդիական է և ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն՝ Հայոց մշակույթի պատմության մի շարք հարցերի լուսաբանման և հետագա ուսումնասիրողների համար: Գրախոսվող ատենախոսությունը թեմայի ընդգրկման առումով առաջիններից մեկն է և պետք է ասել, որ ատենախոսին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները:

Այժմ կցանականայի գրախոսվող աշխատանքի վերաբերյալ ներկայացնել մի քանի սխալներ ու նկատառումներ:

1. Առաջին դիտողություն ունի տեխնիկական բնույթ, բայց կարևոր է գիտական ուսումնասիրություններում: Տողատակի հղումներ էջերում չի կարելի սկսել «Նույն տեղու» հղումով, ինչը ատենախոսությունում կրկնվում է բազմաթիվ անգամ:

2. Ատենախոսությունում օգտագործվել է պատմագիտությունում այլևս հնացած «խորհրդային կարգ» (էջ 36) հասկացությունը «խորհրդային իշխանության» փոխարեն, Հայաստանի առաջին հանրապետություն պատմական և ոչ պաշտոնական հասկացությունում հաճախ առաջին, հանրապետություն բառերը գրվել են մեծատառով, որը սխալ է (էջ 23, 33, 73 և այլն), թեպետ առկա է նաև փոքրատառով օրինակներ (էջ 6), սխալ է Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություն հասկացությունը, պետք է լինի հանրապետություններ (էջ 3):

3. Ատենախոսությունում Աշխարհաբեկ Քալանթարի ծնունդը ներկացնելիս (էջ 10) բացակայում է հայրանունը և տրված է միայն տոհմի անունը, անհրաժեշտ էր այն ևս նշել՝ Աղալո Լոռու Մելիք-Քալանթար:

4. Ատենախոսությունում օգտագործվել է Սանկտ Պետերբուրգի համալսարան անվանումը (էջ 10 և այլն), իրականում անհրաժեշտ էր օգտագործել համալսարանի լրիվ անվանումը՝ Սանկտ-Պետերբուրգի Կայսերական համալսարան:

5. Ատենախոսությունում նշված է, որ Աշխարհաբեկ Քալանթարը 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին իր ծառայությունների համար

արժանացել է փոխգնդապետի կոչման (էջ 11), որը սխալ է, իրականությանը չի համապատասխանում, փոխգնդապետի կոչում ստանալուց առաջ զինվորականը պետք է ստանար առնվազն հինգ սպայական կոչում, որը տևում էր տարիներ, իսկ նա ռազմաճակատում եղել է ընդամենը մի քանի ամիս: Ատենախոսությունում օգտագործվել է «քաղաքացիական գեներալի համազգեստ» հասկացություն (էջ 20), որը անհասկանալի է, իրականում խոսքը պետական խորհրդականի համազգեստի մասին է, որը իր աստիճանով հավասար էր գեներալի աստիճանին և որը ատենախոսությունում պետք է մեկնաբանվեր տողատակի հղման միջոցով:

6. Ատենախոսությունում եթե օգտագործվում է որևէ անձի անվանում, պետք է նշվի նրա ով լինելը: Օրինակ՝ ով է Վ. Վարդանովը (էջ 12), որը որը պետք է վկայական տար Ա. Քալանթարին: Այս դեպքում անհրաժեշտ էր նշել՝ բժշկագիտության դոկտոր, Սանկտ-Պետերբուրգի հայկական խմբակի հիմնադիր Վարդան Վարդանովին:

7. Ատենախոսության 30 էջում Գարեգին Հովսեփյանին ուղարկված Ալեքսանդր Թամանյանի նամակի տեղեկությունը կապ չունի Անիի հետ և խոսքը Գարեգին Հովսեփյանի 1920թ. հոկտեմբերի 30-ին Կարսում գերի ընկնելու և 1921թ. ազատվելու մասին է: Նույն էջում նշված է, որ 1918թ. հոկտեմբերի կեսին Ա. Քալանթարը և Ա. Թամանյանը այցելել են Անի, որը սխալ է, Անին Հայաստանին է անցել 1919թ. մայիսին, իսկ Ա. Թամանյանը Հայաստան է ժամանել ևս 1919թ., և այցելությունը կատարվել է 1919թ. նոյեմբեր-դեկտեմբերին, ինչի մասին նշված է 31 էջում:

8. Ատենախոսությունում ներկայացված է, որ ՀՀ խորհրդարանը (սեղմագրում Հայաստանի ազգային ժողովը) 1920թ. հուլիսի 7-ին ընդունեց հնությունների պետական պահպանության կոմիտե կազմելու մասին օրենքը (էջ 33), որը սխալ է: Օրենքը իրականում ընդունվել է ՀՀ կառավարության նույն օրվա նիստում, քանզի խորհրդարանը չէր գործում և իր օրենսդրական գործառույթները փոխանցել էր կառավարությանը:

9. Ատենախոսությունում, հղում կատարելով Արտաշես Վրույրին, ներկայացված է տեղեկություն, ըստ որի «1922թ. Աշխարհաբեկին հաջողվեց կրկին այցելել Անի» (էջ 40), որը հակասում է 91 էջում բերված տեղեկությանը, որի Ա. Քալանթարը Անի է այցելել 1925թ.: Իհարկե, եթե այդ այցելությունը կայացել է, ապա անհրաժեշտ էր այն լուսաբանել ատենախոսությունում:

Իհարկե վերը նշված թերությունները չեն կարող ազդել այն ծավալուն աշխատանքի վրա, որ կատարել է ատենախոսը՝ մասնագիտական խորհրդին ներկայացնելով բավականին հաջողված ատենախոսություն: Հետևաբար, Կարեն Սամվելի Բայրամյանի «Աշխարհաբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը» ատենախոսական աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացրած պահանջներին, ուստի միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդին, նրան շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ որին միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյան

պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյան ստորագրությունը հաստատում եմ.

Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, գիտական քարտուղար Մարիամ Իսպիրյան

29.05.2024թ.